Հայտարարություն ՀՀ Տավուշի մարզի Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի /ծածկագիրը՝ 2.1-3/, առաջատար մասնագետի /ծածկագիրը՝ 3.1-3/ համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

16.05.2014

Հայտատու՝ Բերդի քաղաքապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2014 թ. հունիսի 19-ին ժամը 11.00-ին ՀՀ Տավուշի մարզի Բերդի քաղաքապետարանում
անցկացվում է մրցույթ համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնների համար.

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ, ծածկագիրը՝ 2.1-3:
Ներքին աուդիտի բաժնի պետը պետք է ունենա բարձրագույն կրթություն, առնվազն 3 տարվա մասնագիտական գործունեության փորձ՝ աուդիտի ոլորտում, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:
Բաժնի պետը կատարում է քաղաքապետարանի և համայնքային ենթակայության կազմակերպությունների ֆինանսական գործունեության աուդիտ: Բաժնի պետը պետք է
ունենա համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

2. ՀՀ Տավուշի մարզի Բերդի քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, ծածկագիրը՝ 3.1-3:
Աշխատակազմի առաջատար մասնագետը պետք է ունենա առնվազն միջնակարգ կրթություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու
ունակություն:

Իրականացնում է գնումների կազմակերպման աշխատանքներ:

Դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
1. դիմում /մրցութային հանձնաժողովի անունով/.
2. անձնագրի, աշխատանքային գրքույկի, կրթությունը հավաստող փաստաթղթերի /արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի/ պատճենները.
3.Մեկ լուսանկար /3x4 սմ չափսի/.
Մրցույթին մասնակցելու համար դիմողները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ:
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 10.00-18.00, բացի շաբաթ և կիրակի օրերից, Բերդի քաղաքապետարանում, հասցեն Լևոն Բեկի 5, 3-րդ հարկ, 2-րդ սենյակ, հեռ. 2-37-79, ՀՀ Տավուշի մարզպետարանում, հասցեն՝ Իջևան, Սահմանադրության 1, հեռ. 3-22-14
Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է 02.06. 2014 թ.:

Բերդի քաղաքապետարան

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Բերդ, լևոն Բեկի 5

Հեռ..՝ +374 267 23779

Էլ. փոստ՝ shushan.smbatyan@mail.ru

Աշխատանքի վերաբերյալ հայտարարություններ